ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

*N 10 -Ա* *ք.Արտաշատ*

*"12" հունվարի 2026թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ և 13-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1" Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տեղեկանք, եզրակացություններ , առաջարկություններ, | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | 300 | | 5 | | | | | | | | |
| 2027-29 թթ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտի նախագիծ, գրություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | 300 | | 5 | | | | | | | | |
| Նախահաշիվներ, վճարման հանձնարարագիր, գրություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | 300 | | 5 | | | | | | | | |
| Աշխատավարձերի տեղեկագրեր, վճարման հանձնարարագրեր, հաշվառման գրքեր և քարտեր, հաշվետվություններ, գլխավոր գիրք, հաշվապահական հաշվեկշիռ, վճարման հայտերի և ծախսերի կատարման հայտերի փաթեթներ | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | 350 | | 5 | | | | | | | | |
| Նախահաշիվ, ժամանակացույց, հաշվետվություններ | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | 300 | | 5 | | | | | | | | |
| Ծրագրեր և գնումների հայտի փաթեթներ, նախագծանախահաշվային ծավալաթերթեր, տեխնիկական բնութագրեր, կատարողական ակտեր, արձանագրություններ, ֆինանսական հաշվետվություններ, ավարտված օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ-եզրակացություններ | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | 350 | | 5 | | 400 | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տեղեկանք, գրանցման վկայականների պատճենները | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |
| Հաշվետվություն, տեղեկանք, փաթեթ, մարզպետի որոշման նախագիծ | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 350 | | 5 | | 410 | | | | | |
| Շտեմարան, գրանցամատյան, հաշվետվություններ | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 200 | | 5 | | | | | | 200 | |
| Արձանագրություններ տեղեկանքներ, հաշվետվություններ | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 5 | | | | | | 150 | |
| Օրակարգ, անհրաժեշտ փաստաթղթեր, արձանագրություն: | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | 150 | |
| Ամփոփագրեր, կատարման ակտ | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 5 | | | | | | | |
| Ելից և մտից փաստաթղթեր, Գրանցամատյան, առաքում՝ առձեռն, փոստային և սուրհանդակային ծառայությունների միջոցով | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 6 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ | 1 | 1 | 30.12.2026թ. | | | | | | 200 | | 5 | | | | | | | |
| Հայտեր, որոշումներ, ծրագրեր, հաշվետվություններ, եզրակացություններ | 1 | 1 | 30.12.2026թ. | | | | | | 200 | | 5 | | | | | | | |
| Գրություններ , տեղեկանքներ | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 200 | | 5 | | | | | | 100 | |
| Իրավական ակտ, փաստաթուղթ: | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 350 | | 7 | | | | | | 100 | |
| Գրանցամատյան, քարտեր, տեղեկանք, գրություն, զեկուցագիր | 1 | 1 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | 200 | | | |
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործառույթների իրականացում | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 350 | | 5 | | | | 200 | | | |
| Մարզի, համայնքների, կազմակերպությունների զորահավաքային պլաններ | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 7 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հեկուցագիր, արձանագրություն, գրություն, որոշում, պայմանագիր, անձնական գործ, տվյալների էլեկտրոնային շտեմարան | 4 | 4 | 30.12.2026թ. | | | | | | 350 | | 8 | | | | | | | |
| Տեղեկանք, միջնորդագիր, զեկուցագիր, կայքում տեղադրված նյութեր | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 7 | | | | | | | |
| Խորհրդատվություն, տեղեկատվություն, գրություն | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 350 | | 7 | | 100 | | 150 | | 100 | |
| Չի նկարագրվում | 4 | 4 | 30.12.2026թ. | | | | | | 650 | | 10 | | 100 | | 150 | | 54 | |
| Չի նկարագրվում | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 650 | | 10 | | 100 | | 150 | | 54 | |
| | 100 | 100 | | | | | | | 13860 | 0 | 252 | 0 | 2268 | 0 | 1512 | 0 | 1008 | 0 |

| Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | | Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին | | Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն | | Ջրահավաքային նախապատրաստության բաժին | | Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի | | Ֆինանսական վարչություն | | Իրավաբանական բաժին | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական |
| 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| 100 | | | | | | | | | | | | | |
| 50 | | | | | | | | | | | | | |
| 50 | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | | | | | | | | | | | | | |
| 50 | | | | | | | | | | | | | |
| | | | | 200 | | | | | | | | | |
| 50 | | 120 | | 50 | | 54 | | | | 50 | | 106 | |
| | | 180 | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 170 | | | | | | | | | |
| 450 | | | | | | | | | | | | | |
| 400 | | | | 20 | | | | | | | | | |
| | | | | 150 | | | | | | | | | |
| | | | | 150 | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | 350 | | | |
| | | | | | | | | | | 300 | | | |
| | | | | | | | | | | 350 | | | |
| | | | | | | | | | | 350 | | | |
| | | | | | | | | | | 350 | | | |
| | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 350 | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | 250 | | | | | |
| | | | | | | | | 254 | | | | | |
| | | | | | | | | 350 | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 140 | | | | | | | | | | | |
| | | 136 | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | 350 | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | 250 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | 400 | | | | | |
| | | | | | | | | 400 | | | | | |
| 50 | | | | 48 | | | | 150 | | 66 | | 100 | |
| 90 | | 90 | | 110 | | 100 | | 106 | | 100 | | 100 | |
| 74 | | 90 | | 110 | | 100 | | 106 | | 100 | | 100 | |
| 1764 | 0 | 756 | 0 | 1008 | 0 | 504 | 0 | 2016 | 0 | 2016 | 0 | 756 | 0 |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ
3414870525

2026-01-14 14:33:27 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ձև N 1

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

2026թ հունվարի -ի թիվ __________ որոշման

<u>Պետական կառավարման մարմնի աշխատանքային ծրագրի և կատարողականի գնահատման ակտ</u>

<u>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ</u>

| NN | Աշխատանքի անվանումը | Աշխատանքի ժամկետը | Աշխատանքի նպատակը | Աշխատանքի գնահատման չափանիշը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Մարզի տարածքում քաղաքաշինական գործառույթների իրականացում, «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում: Համայնքների ղեկավարների քաղաքաշինության բնագավառում հսկողության իրականացում, սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեության աջակցություն:<br>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Քաղաքաշինության կոմիտե» բաժնի 1.3, 1.4 և 9.1 միջոցառումներ | Շարունակական | Օրենսդրությանը համապատասխան առաջարկությունների և եզրակացությունների ապահովում, քաղաքաշինական գործառույթների իրականացում, նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի կարգավորում, անձնագրերին ներկայացվող պահանջների սահմանում, միկրոռեգիոնալ փաստաթղթերի շրջանակներում հաստատված առաջարկությունների հիման վրա կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթների մշակման միջոցով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում: | Գործընթացների իրականացում օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում: Համաձայնեցման ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ հիմնավորված առաջարկությունների և եզրակացությունների կազմում: Սահմանված ժամկետներում և կարգով աշխատանքների կազմակերպում և իրականացում: Մարզպետի համապատասխան որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում: |
| 2 | Մարզային նշանակության ավտոճանապարհների նորոգման, ձմեռային պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպում: Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի 59.1 միջոցառում | Շարունակական | Ճանապարհների և կառույցների պահպանվածության ապահովում, ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների համաձայնեցումների ձեռքբերում և կանոնակարգում: | Ձմեռային պահպանման և շահագործման ենթակա ճանապարհների ցանկերի կազմում, կատարված աշխատանքների ընդունում, անվտանգ երթևեկության ապահովում, ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում օբյեկտների կառուցման կանոնակարգում: |
| 3 | Մարզային, համայնքային ենթակայության կոմունալ ծառայությունների և համայնքներում գազաֆիկացման, էներգամատակարարման և ջրամատակարարման բարելավման, աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում, աշխատանքների ուսումնասիրություն: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի 5.3 միջոցառում | Շարունակական | Որակյալ ջրամատակարարման և այլ կոմ. ծառայությունների իրականացում, ազգաբնակչությանը գազի, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման հասանելիության ապահովում, Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների համակարգում | Համայնքներում համապատասխան աշխատանքների դրվածքի ուսումնասիրում, իրականացվող աշխատանքների վերաբերյալ լիարժեք և պարբերաբար տեղեկատվության ներկայացում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ամենամյա չափորոշիչների պահանջների կատարման հսկողություն, բժշկական օգնության կազմակերպում և վերահսկողություն, վերահսկում բուժհաստատությունների գործունեությանը՝ օրենսդրությանը համապատասխան: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Առողջապահությա նախարարություն» բաժնի 10.2, 10.3 միջոցառումներ: | նպատակային | Համապատասխանելիություն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված չափորոշիչներին: | Բուժհաստատությունների կողմից մարզի ազգաբնակչությանը որակյալ բժշկական օգնության ցուցաբերում: Բնակչության առավել անապահով, խոցելի խավի համար պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների համապատասխանեցում սահմանված չափանիշներին: |
| 5 | Մարզի ազգաբնակչության առավել անապահով խավերի որակյալ բժշկական օգնության ցուցաբերման, սանիտարահամաճարակային վիճակի բարելավման հսկողություն: Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում: Պայքար տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ: Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների դեմ պայքար: Բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների և պատրաստվածության շարունակական բարձրացման ու զարգացման գործընթացների աջակցություն և կազմակերպում,«Բուժքույրական գործի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» առողջապահության նախարարի հրամանի կատարման ապահովում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Առողջապահության նախարարություն» բաժնի 5.8 միջոցառում: | նպատակային | Մարզի ազգաբնակչության առավել անապահով խավերի որակյալ բժշկական օգնության տրամադրում, զորակոչային տարիքի բուժօգնության կազմակերպում, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների իմունիզացիայի վիճակի բարելավում, ՄԻԱՎ, Տուբերկուլոզի ազգային ծրագրերի իրականացում: Ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկերի նվազեցում և բնակչության շրջանում ծխախոտ օգտագործման նվազեցում: Բուժանձնակազմի համար գիտաժողովների, կոնֆերանսների, քննարկումներ, սեմինարների դասընթացների և փորձի փոխանակման միջոցառումների աջակցություն և կազմակերպում: Ծխելու դադարեցմանն ուղղված բուժման և խորհրդատվության վերաբերյալ Առողջության առաջնային պահպանման օղակում ծխախոտի օգտագործման դադարեցմանն ուղղված բնակչությանը աջակցություն ցուցաբերող վերապատրաստված (ՀՀԱՆ-ի կողմից) թերապևտ/ ընտանեկան բժիշկ մասնագետների առկայություն: | Բնակչության առավել անապահով խավերին օրենսդրությամբ ամրագրված իրավունքի իրականացում, սանիտարահամաճարակային վիճակի բարելավում |
| 6 | Պետական և ոչ պետական ծրագրերով բնակարանի կարիք ունեցող զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և փախստական ընտանիքների աջակցում, մարզի երեխաների ամառային հանգստի կազմակերպմանն աջակցում:Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի 2.1 միջոցառում: | նպատակային | Սոցիալապես անապահով ընտանիքների աջակցություն, բնակարանի կարիք ունեցող ընտանիքների հաշվառում, ճամբարի ցուցակներ: | Ճամբար մեկնող երեխաների կարգավիճակի ստուգում, փաստաթղթերի հավաքագրում: |
| 6.1 | «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի,դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» «Սպորտ» ենթաբաժնի 50.1; 50,6 միջոցառումներ: | նպատակային | Դպրոցականների շրջանում վազքի և առողջ ապրելակերպի մասսայականացում,ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում: | Ընթացիկ, տարածքային և մարզային փուլերի ժամանակացույցերի, հանձնաժողովների, կազմված ծրագրին և ժամանակացույցին համապատասխան միջոցառման անցկացում, նախորդ տարիների նկատմամբ մասնակիցների միջոցառումների աճ |
| 6.2 | «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերի անցկացում ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» «Սպորտ» ենթաբաժնի 50.7 միջոցառում: | նպատակային | Դպրոցականների շրջանում վոլեյբոլ մարզաձևի զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում: Միջոցառման եզրափակիչ փուլին շուրջ 198 դպրոցականների մասնակցության ապահովում | Դպրոցական և մարզային փուլերի կազմակերպում և անցկացում |
| 6.3 | «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» «Սպորտ» ենթաբաժնի 50.2 միջոցառում: | նպատակային | Մասսայականացնել սեղանի թենիսը Հայաստանի Հանրապետությունում, շուրջ 200 անձանց մասնակցության ապահովում:2023 թ.շուրջ 500 անձանց մասնակցության ապահովում, 2024-2026 թ. նախորդ տարիների համեմատությամբ մասնակիցների թվաքանակի առնվազն 10% աճ: | Ընթացիկ, տարածքային և մարզային փուլերի ժամանակացույցերի, հանձնաժողովների, կազմված ծրագրին և ժամանակացույցին համապատասխան միջոցառման անցկացում, նախորդ տարիների նկատմամբ մասնակիցների միջոցառումների աճ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6.4 | Մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» «Սպորտ» ենթաբաժնի 50.5 միջոցառում: | ողջ տարի | Ֆիզիկական դաստիարակության անընդհատության և Ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու անընդհատության ապահովում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում: 2023 թթ. 4 մարզական մասսայական միջոցառումներին շուրջ 30000 անձանց մասնակցության ապահովում,2024-2026 թթ. նախորդ տարիների համեմատությամբ մասնակիցների թվաքանակի առնվազն 5 % աճ: | Ընթացիկ, տարածքային և մարզային փուլերի ժամանակացույցերի, հանձնաժողովների, կազմված ծրագրին և ժամանակացույցին համապատասխան միջոցառման անցկացում, նախորդ տարիների նկատմամբ մասնակիցների միջոցառումների աճ |
| 7 | Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում:«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում:<br>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» «Սպորտ» ենթաբաժնի 50.3 միջոցառում: | ողջ տարի | Հանրապետությունում լողի և առողջ ապրելակերպի մասսայականացում ապահովել 100 անձանց մասնակցություն:<br>2023թ. շուրջ 120 անձանց ապահովում, 2024-2026 թթ. նախորդ տարիների համեմատությամբ մասնակիցների թվաքանակի առնվազն 5% աճ: | Ընթացիկ, տարածքային և մարզային փուլերի ժամանակացույցերի, հանձնաժողովների, կոդավորված տետրերի, առաջադրանքների կազմում, կազմված ծրագրին և ժամանակացույցին համապատասխան միջոցառման անցկացում, նախորդ տարիների նկատմամբ մասնակիցների միջոցառումների աճ |
| 8 | Ինտենսիվ այգիների հիմնում, տեղական սերմնաբուծության և սերմարտադրության իրականացման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի առկայության ապահովում , ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացում,արդիական տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնում, գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության համակարգի ամբողջական ներդրում, վարկային լիզինգային և փոխհատուցման գործիքներով գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի նորացում: Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում:<br>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 9.2 ,9.3 , 9.7 միջոցառումներ | ողջ տարի | Ինտենսիվ այգիների տարածքների ավելացում, տեղական սերմնաբուծության և սերմարտադրության իրականացման,բերքի բարձր սորտերի ներդրման, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի տարածքների ավելացման, արդիական տեխնոլոգիաներով ջերմատնային տնտեսությունների տարածքների ընդլայնման, գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության համակարգի ամբողջական ներդրման միջոցով գյուղատնտեսական կայունություն և ռիսկերի նվազեցում: համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների, բերքահավաքի և մթերումների արդյունավետ կազմակերպում: Վնասակար օրգանիզմների ներթափանցման և տարածման կանխում, գյուղատնտեսական նշանակության հողերի բուսասանիտարական վիճակի բարելավում: | Սահմանված ժամկետին և ագրոտեխնիկական կանոններին համապատասխան կայուն և նվազ ռիսկերով գյուղատնտեսության ապահովում |
| 9 | ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի և ՀՀ պետական կառավարման մարմինների հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում<br>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի 106.1 միջոցառում | ողջ տարի | Սահմանված ժամկետում հանձնարարականների կատարման ապահովում | Ժամկետանց հանձնարարականների բացառում |
| 10 | ՀՀ Արարատի մարզի տարածքային համաչափ զարգացմանն ուղղված համայնքների ենթակառուցվածքների զարգացում:<br>ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բաժնի 4.1 միջոցառում | ողջ տարի | Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում | Համայնքներում կապիտալ ներդրումների ակտիվացում, տնտեսական և սոցիալական նշանակության ենթակառուց-վածքների բարելավում և արդիականացում, համայն-քային բնակչության կյանքի որակի բարելավում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 11 | Պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրերի իրականացում, տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում, գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի իրականացում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 9.8 միջոցառում | Տնտեսական | Կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովում, կենդանական ծագում ունեցող սննդամթերքի անվտանգության ապահովման սկզբունքների կիրառում՝ 1) կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելում. 2) գյուղատնտեսական ոլորտում գործող արտադրող և վերամշակող կազմակերպություններին անասնաբուժական տեսակետից անվտանգ հումքի ապահովում: Անասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովում, կենդանական ծագման հումքի և մթերքի որակի բարելավում, արտադրության ծավալների ավելացում: | Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ուղղությամբ տեղեկատվության հավաքագրում: |
| 12 | Հանրակրթական դպրոցների աշխատանքների համակարգում և վերահսկողության իրականացում: Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում: ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն»բաժնի «Մշակույթ» ենթաբաժնի 33.6 միջոցառում: | Տնտեսական | Դպրոցներում կրթության քաղաքականության իրականացում, պետական և հանրակրթության չափորոշիչների, ծրագրերի և կրթության որակի ապահովում | Դպրոցների կառավարման մարմինների ձևավորում, Դպրոցների գործունեության մասին հաշվետվությունների քննարկում, Տարեկան հաշվեկշիռների հաստատում |
| 13 | Ուսումնական հաստատություններին հատկացվող դասագրքերի, ավարտական վկայականների և ատեստատների կրկնօրինակների, այլ ուղեցույցների և ուսումնաօժանդակ գրականության ստացման և բաշխման կազմակերպում, առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցման համակարգի ներդնում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում: | Ընթացիկ | Դասագրքերի, պարտադիր օգտագործման գրականության և ավարտական փաստաթղթերի ապահովում, առարկայական ուսուցիչների խնդիր ունեցող դպրոցների աշակերտների տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցում: | Դասագրքերի պահանջարկի ձևավորում, դասագրքերի և մեթոդական ձեռնարկների ստացում և պահեստավորում, բաշխման գործընթացի կազմակերպում, դպրոցների միջև անցած տարիներին հրատարակված դասագրքերի վերաբաշխում, ըստ դպրոցների հաշվետվությունների ընդունում, սահմանված ժամկետների պահպանում |
| 14 | Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում խնդրության իրականացում և ծրագրերի մշակման աջակցություն: Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և հարմարվողականության կարողությունների ամրապնդում, հողերի դեգրադացիայի գաղափարի իրականացում: | Ընթացիկ | Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման ապահովում: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարակից համայնքների կանաչ տարածքների ավելացում, կլիմայական ռիսկերի նկատմամբ խոցելիության նվազեցում: | Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը: |
| 15 | Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքների ավելացում: Մարզային նշանակության ոռոգման ցանցերի և ջրամբարներում կուտակված ջրածավալների ուսումնասիրություն, ոռոգման սեզոնի կազմակերպմանը աջակցություն: | Ընթացիկ | Գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործում, չօգտագործվող հողերի շրջանառության մեջ ներառում,նպաստում հողերի խոշորացմանը, ոռոգման ջրի կորուստների նվազեցում, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ոռոգվող հողատարածքների ավելացում, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ոռոգման ջրի հասանելիության մակարդակի բարձրացում: | Մարզային նշանակության ոռոգման ցանցերի և ջրամբարների ջրածավալների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության կազմում և առաջարկությունների ներկայացում: Ոռոգման իրականացման վերաբերյալ պարբերական տեղեկատվության ներկայացում, ոռոգման ցանցերի վերանորոգմանն և առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | Ֆինանսական հսկողության իրականացում՝ համայնքների բյուջեները սահմանված մեթոդաբանությանը համապատասխանության կազմելու նկատմամբ, հաշվետվությունների ընդունում | ընթացիկ | Համայնքների ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործում: | ՏԻՄ -երի կողմից պարտադիր և պատվիրակված լիազորությունների կատարում |
| 17 | 2027-2029թթ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի ու հայտերի կազմում և 2027թ բյուջետային գործընթացի իրականացում | ընթացիկ | ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի 2027-2029թթ ռազմավարության հստակեցում, մարզպետի աշխատակազմի միջոցով իրականացվող ծրագրերի գծով անհրաժեշտ ծախսերի պլանավորում: | ՄԺԾԾ մշտապես գործող խորհրդի կողմից մշակված մեթոդական ցուցումներին և կողմնորոշիչ չափաքանակներին համապատասխան, սահմանված ժամկետում մարզպետի աշխատակազմի միջոցով իրականացվող ծրագրերի հայտերի կազմում և ներկայացում համապատասխան մարմիններ: |
| 18 | Մարզպետի աշխատակազմի միջոցով իրականացվող ծրագրերի ծախսերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման գործընթացի իրականացում: Ֆինանսական ոլորտում աջակցություն և մեթոդական օգնության տրամադրում՝ մարզպետի աշխատակազմի ենթակայության 50 տոկոս և ավել պետական մասնակցության բաժնետիրական ընկերություններին: | ընթացիկ | Ֆինանսատնտեսագիտական գործունեության անհրաժեշտ մակարդակի ապահովում և ֆինանսական ոլորտում սխալների բացառում, մարզպետի աշխատակազմի միջոցով իրականացվող ծրագրերի ֆինանսավորման ապահովում: | Մարզպետի աշխատակազմի միջոցով իրականացվող ծրագրերի՝ սահմանված չափորոշիչների համապատասխան նախահաշիվների առկայությունը կատարված ծախսերին համապատասխան, սահմանված ժամկետում պարտավորությունների գրանցումը և ֆինանսավորումը: |
| 19 | Մարզպետի աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարում | ընթացիկ | Տեղեկատվության տիրապետում և միասնական հիմունքներով ֆինանսական հաշվետվությունների կազմում: | Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հավաքագրում, ակտիվների, պարտավորությունների, ֆոնդերի վիճակի, չարժի համընդհանուր գրանցում, անալիտիկ և սինթետիկ հաշվառում, վճարման հայտերի և ծախսերի կատարման հայտերի փաթեթների կազմում, փաստացի ծախսերի վճարում համաձայն ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի՝ սահմանված ժամկետում հաշվապահական հաշվետվությունների ներկայացումը համապատասխան լիազոր մարմիններին: |
| 20 | Պետական բյուջեի առանձին ծրագրերով մարզին հատկացված միջոցների նախահաշիվների կազմում: Մարզպետի աշխատակազմի կատարած բյուջետային ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների կազմում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն | ընթացիկ | Պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործում, ֆինանսական միջոցների դրամարկղային ծախսերի և փաստացի ծախսերի արտացոլում: | Մարզին հատկացված միջոցների շրջանակներում պարտավորությունների կատարում, ծրագրերի իրականացում: Սահմանված ժամկետներում հաշվետվությունների կազմում: |
| 21 | Քաղաքաշինության բնագավառի Արարատի մարզի ընթացիկ միջնաժամկետ ծախսային ծրագրի /ՄԺԾԾ/ և մարզի տարեկան պետ. բյուջեի հաշվին նախատեսվող կապիտալ շինարարության և հիմնանորոգման ծախսերի հայտի կազմում, մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ տարվա ընթացքում իրականացվող շինարարական աշխատանքների կազմակերպում: | ընթացիկ | Պետական. բյուջեից համապատասխան ֆին. տրամադրում, նախատեսված շինարարական աշխատանքների իրականացում | Սահմանված ժամկետներում, մեթոդական ցուցումներին համապատասխան տեղեկատվության հավաքագրում, գնումների հայտի պատրաստում և պետական գնումների գործակալություն ներկայացում: Գործող շինարարական նորմերի և կանոնների պահանջների համապատասխանության վերահսկում: Փաստացի կատարված աշխատանքների դիմաց ժամանակին վճարման համար համապատասխան փաստաթղթերի պատրաստում: Շինմոնտաժային աշխատանքների սահմանված ժամկետում ավարտ և շեղումների դեպքում համապատասխան միջոցառումների ձեռնարկում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22 | Հանրակրթական համակարգի շենքային պայմանների, նյութատեխնիկական բազայի վիճակի ուսումնասիրում, ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանման վերահսկողություն: | Ընթացիկ | Ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների բարելավում, օրինականության ապահովում: | Համապատասխանություն սահմանված ժամկետներին, ուսումնասիրությունների կատարում բոլոր հաստատություններում, լիարժեք և օբյեկտիվ տեղեկատվության ներկայացում: |
| 23 | Հողային հարաբերություններում համայնքների ղեկավարների գործունեության վերահսկողության իրականացում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողային ֆոնդի, հողերի հարկի և վարձավճարների գանձման, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների մշակմանը աջակցություն, հաշվետվությունների ամփոփում և մարզի հողային հաշվեկշռի կազմում: Համայնքների վարչական սահմաններում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող օտարման ծրագրերի մշակում, օրինականության ուսումնասիրում: | Ընթացիկ | Համայնքների ղեկավարների կողմից հողի հարկի և վարձավճարների գանձման գործում թերացող համայնքների բացահայտում, պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարում, հողերի նպատակային նշանակության փոփոխման նպատակով սահմանված կարգով պահանջվող փաստաթղթերի փաթեթի կազմում,համայնքում ըստ սեփականության սուբյեկտի և նպատակային նշանակության հողերի շարժի հաշվառման տվյալների ամփոփում և մարզի հողային հաշվեկշռի կազմում | Համայնքների բյուջեներում արտացոլված հողի հարկի և վարձավճարի գանձումների բարձր մակարդակի ապահովում, սխեմաների համապատասխանեցումը հողաշինարարական և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պահանջներին, ՀՀ կառավարության 2000թ հոկտեմբերի 23-ի 'Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին' թիվ656 որոշման պահանջների համապատասխան մարզի հողային հաշվեկշռի կազմում: |
| 24 | Համայնքային ծառայողների գրանցամատյանների, վերապատրաստման, ատեստավորման, մրցույթների անցկացման կազմակերպում | Ընթացիկ | ՀՏ օրենսդրության ապահովում: | ՀՏ օրենսդրության ապահովում: |
| 25 | Տարածքային կառավարման մարմինների հետ տարվող աշխատանքների իրականացում և աջակցում: ՏԻՄ-երի լիազորությունների նկատմամբ մասնագիտական և իրավական հսկողության իրականացում: | Ընթացիկ | Համագործակցված աշխատանքների կազմակերպում, Իրավական և մասնագիտական հսկողություն: | ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխանության ապահովում, համագործակցված աշխատանքների կազմակերպում |
| 26 | Մարզխորհրդի նիստերի նախապատրաստման և արձանագրման աշխատանքների ապահովում | Ընթացիկ | Օրակարգի, արձանագրության կազմում: | Սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում և արձանագրում: |
| 27 | Մարզպետի աշխատակազմի նյութատեխնիկական և մատակարարման իրականացում | Ընթացիկ | Ակտիվների փաստացի առկայության ապահովում, գույքի տեխնիկական մասի բարվոք վիճակի ապահովում: | Մարզպետի աշխատակազմի նյութատեխնիկական մատակարարման, մարզպետի աշխատակազմի վարչական շենքի և գույքի պահպանման հետ կապված աշխատանքների կազմակերպում:Ակտիվների և պարտավորությունների ժամանակին կատարում, գույքի տեխնիկական մասի բարվոք վիճակի ապահովում: |
| 28 | Մարզպետի աշխատակազմ էլեկտրոնային և թղթային տարբերակներով ստացված պաշտոնական թղթակցությունների /այդ թվում գաղտնի/ գրությունների, առաջարկությունների, նամակների, հարցումների, քաղաքացիների դիմումների, բողոքների ընդունում, էլեկտրոնային համակարգ մուտքագրման և գրանցման, ինչպես նաև դրանց պատասխանների առաքումը հասցեատերերին աշխատանքների կազմակերպում և վերահսկում: | Ընթացիկ | Գործավարության կարգի պահանջների կատարման և փաստաթղթերի պահպանության ապահովում: Սահմանված ժամկետում հանձնարարականների կատարման ապահովում | Չգրանցված փաստաթղթերի բացառում, սահմանված ժամկետներում փաստաթղթերի առաքում Արխիվի մասին ՀՀ օրենքին համապատասխան փաստաթղթերի պահպանման առկայություն: Մարզպետի աշխատակազմ ստացված գրությունների սահմանված ժամկետում գրանցում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ: ժամկետանց հանձնարարականների բացառում : |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 29 | Մարզի արդյունաբերության ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին աջակցության ցուցաբերում, զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և զարգացման հետ կապված աշխատանքներ, առևտրի և ծառայությունների ոլորտի հսկողություն | հիմնական | Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում: ՏԻՄ -ի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված գործունեության համապատասխանություն օրենսդրությանը: Ագրոտուրիզմի, էկոտուրիզմի, մշակութային, լեռնային և զբոսաշրջության այլ ճյուղերի զարգացում: | Մարզի ձեռնարկատիրության համակարգի վերաբերյալ տեղեկատվության ստացում և վերլուծություն: Զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում: Համայնքներում հսկողության անցկացման արդյունքում ձեռնարկված միջոցառումներ: |
| 30 | Մարզի արտաքին կապերի զարգացում, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծում: | հիմնական | Մարզի արտաքին կապերի հաստատում և ընդլայնում, | Մարզի արտաքին կապերի և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում: |
| 31 | Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության համայնքային պլանների ճշգրտման, համայնքներում աղետների ռիսկերի նվազեցման/ԱՌՆ/ գործընթացի կազմակերպում | հիմնական | ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխանեցիության ապահովում, համագործակցված աշխատանքների կազմակերպում | Գործընթացում տեղ գտած թերությունների ճշգրտում |
| 32 | Մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունվող իրավական ակտերի, այլ փաստաթղթերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանությանը ապահովում: Ընդունված իրավական ակտերի /մարզպետի, մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների ղեկավարների, համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից/ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրություն: | հիմնական | Օրենսդրության հետ համապատասխանության ապահովում | Իրավական ակտերի, այլ փաստաթղթերի համապատասխանեցումը օրենսդրությանը |
| 33 | Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքերի հավասար հնարավորությունների հիմնահարցերի ուսումնասիրում, կոնֆլիկտային ընտանիքներին հոգեբանական խորհրդատվության տրամադրում սեմինարների և գիտաժողովների մասնակցում, թրաֆիքինգի հիմնահարցերի ուսումնասիրություն, ոստիկանության տարածքային բաժինների կողմից հաշվառված անչափահասների հետ տարվող աշխատանքներ:: | հիմնական | Սոցիալական երաշխիքների ապահովում | Ընտանիքների,կանանց և երեխաների իրավունքերի պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակում,միջոցառումների իրականացում: |
| 34 | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ,այդ թվում ԱԾԽՄ և նրանց թվին պատկանող, որդեգրման ենթակա, խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնող անձի,հաշվառման , երեխայի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ տեղավորելու, կենսաբանական ընտանիք վերադարձնելու անհրաժեշտ միջոցառումների իրականացում շտեմարանի վարում: | հիմնական | Երեխաների իրավունքների պաշտպանություն | <<Մանուկ տեղեկատվական>> համակարգում մուտքագրում, շտեմարանների ստեղծում, պայմանագրերի կնքում: |
| 35 | Մարզի զորահավաքային պլանների վերամշակման, ճշգրտման և արդիականացմանը, մարզի զորահավաքային համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ | հիմնական | Ռազմական դրությունում և արտակարգ իրավիճակներում մարզի ազգաբնակչության պաշտպանվածության և կենսապահովման արդյունավետ իրականացումը | Մարզի զորահավաքային մարմինների անձնակազմի բարձր մասնագիտական պատրաստվածության աստիճանի ապահովում և զորահավաքային ժամանակաշրջանում պաշտոնական պարտականությունների կատարման գործնական հմտությունների տիրապետում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 36 | Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման իրավական և կազմակերպչական գործառույթների իրականացում | ընթացիկ | Մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական, մշակութային կազմակերպությունների տնօրենների, պետական ուսումնական հաստատությունների տնօրենների, վարչատնտեսական մասի համակարգողի և մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մրցույթների նախապատրաստական աշխատանքների ապահովում: Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների կազմակերպում: Մարզպետի աշխատակազմի բարեվարքության համակարգի աշխատանքների համակարգում: | Օրենքով սահմանված կարգով անձնական գործերի վարում, ՀՀ աշխատանքային օրենսգրքով և <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված գործառույթների համապատասխան ժամկետներում ճշգրիտ իրականացում, կադրերի վերաբերյալ մարզպետի որոշումների և գլխավոր քարտուղարի հրամանների նախագծերի մշակում: |
| 37 | Մարզպետի աշխատակազմի գործունեության համակողմանի լուսաբանում, ԶԼՄ-ների հետ աշխատանք, տեղեկատվության հավաքագրում և տեղադրում կայքում: Մամուլի և կայքերի ամենօրյա մոնիթորինգ: | ընթացիկ | Հանրային իրազեկում, աշխատանքի լուսաբանում, ԶԼՄ մոնիթորինգ: | Մարզպետի աշխատակազմի ընթացիկ խնդիրներից ելնելով՝ մամուլի հաղորդագրությունների օպերատիվ պատրաստում և հրապարակում, կայքում տեղեկատվության առկայություն, պարբերաբար թարմացում, մամլո ասուլիսների, հանդիպումների և ընդունելությունների կազմակերպում |
| 38 | Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընդունում, դիմում-բողոքների ուսումնասիրում և մարզպետին ներկայացվող առաջարկությունների պատրաստում | ընթացիկ | Քաղաքացիների բարձրացրած խնդիրներին օպերատիվ արձագանքում | Քաղաքացու մասնակցությամբ իր բարձրացրած հարցի քննարկում, օպերատիվ պարզաբանման, անհրաժեշտ տեղեկատվության, խորհրդատվության տրամադրման ապահովում:<br>Առանձին դեպքերում զանգվածային /կոլեկտիվ/ բնույթ կրող, համայնքային, կենսական նշանակություն ունեցող հարցերի լուծման նպատակով օպերատիվ միջամտությամբ խնդրի կարգավորում:<br>Բարձրացված հարցերի հնարավոր լուծման կամ հետագա ընթացքի մասին առաջարկությունների ներկայացում: |
| 39 | Այլ ընթացիկ աշխատանքներ | ընթացիկ | Ընթացիկ նպատակային | Չի նկարագրվում |
| 40 | Չպլանավորված աշխատանքներ | ընթացիկ | Ընթացիկ նպատակային | Չի նկարագրվում |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

| Աշխատանքի արդյունքի ձևը | I կիսամ. | II կիսամ. | պլան | իրական | գնահատական | կշռված գնահատական | գնահատական | կշռված գնահատական | ընդամենը մարդ/օր | | Գլխավոր քարտուղար | | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցված քների կառավարման | | Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն | | Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական | պլան | իրական |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| Գրություններ, եզրակացություններ, արձանագրություններ, որոշման նախագծեր, | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 6 | | 280 | | | | | |
| Ներկայացված պահպանման ենթակա ճանապարհների ցանկեր: Ավտոմոբիլային ճանապարհների պահպանման մակարդակի մասին տեղեկանքներ, հաստատված արձանագրություններ,փաթեթներ, շին. թույլտվություն, ձև N3, N5 | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 450 | | 7 | | 430 | | | | | |
| խորհրդատվություն, գրություն, տեղեկանք | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 400 | | 8 | | 400 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հաշվետվություններ, շրջաբերական: | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 350 | | 7 | | | | 200 | | | |
| Պետական պատվերի կազմակերպման չափորոշիչներ, զեկուցագրեր, հաշվետվություններ, շրջաբերական: | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | 200 | | | |
| Զեկուցագրեր, առաջարկություններ, հաշվետվություն ցուցակ: | 3 | 3 | 30.12.206թ. | | | | | | 350 | | 5 | | | | 200 | | | |
| Տեղեկանք, հաշվետվություն | 1 | 1 | 30.09.2026թ.<br>30.06.2026թ. | | | | | | 200 | | 5 | | | | | | | |
| Տեղեկանք, հաշվետվություն | 1 | 1 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |
| Տեղեկանք, հաշվետվություն | 1 | 0 | 30.04.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տեղեկանք, հաշվետվություն | 1 | 2 | 20.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |
| Տեղեկանք, հաշվետվություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |
| Տեղեկանք, շրջաբերական, գրություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 6 | | | | | | | |
| Արձանագրություն, փաստաթուղթ, գրություն | 3 | 3 | 30.12.2026թ. | | | | | | 530 | | 6 | | 48 | | 62 | | 100 | |
| Հայտերի ընդունում, ծրագրերի ընթացքի վերաբերյալ մոնիթորինգի իրականացում, հաշվետվություններ, եզրակացություններ | 4 | 4 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տեղեկանք, շրջաբերական, գրություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 300 | | 5 | | | | | | | |
| Հաշվետվություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 400 | | 5 | | | | | | | |
| Ընդունման-հանձման ակտեր, տեղեկանք, հաշվետվության նախագիծ | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 330 | | 5 | | | | | | | |
| Տեղեկանք, շրջաբերական, գրություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |
| Տեղեկանք, շրջաբերական, գրություն | 2 | 2 | 30.12.2026թ. | | | | | | 250 | | 5 | | | | | | | |